Չորրորդ Տարի

# ԽԱԹԱԲԱԼԱ

Գինն է 10 կ. Գաւառներում 12 կ. 1909, Շաբաթ, մայիսի 30-ին. Թիֆլիս. №22



ՄՈԴԱԿԱՆ ԱՆԵՐԵՒՈՅԹԱՑՈՒՄԸ ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ՔՈՒԷՏՈՒՓԻ

Թիֆլիզի Առեւտրական բանկում. Փանդոյեանի քւէատուփը յանկարծ անհետացաւ: Ձեռք առած միջոցները՝ խուզարկութիւնն ու քննութիւնը-իզուր անցան:

## ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿԱՅԶԵՐԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ ԵՒ ՏԱՃԿԱՍՏԱՆՈՒՄ



Բիւլովը Վիլհէլմին.— Ձերդ մեծութիւն, գործիր, բայց և քիչ խօսիր.

## Բ Ա Լ Ա Խ Ա Ն Ի Ո Ւ Մ (Բագու).



Մշակները քահանայացու կամ քահանայ են ընտրում տուր ու դմփոցով.

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՈՒՄ Է 4 Տարի

# „ԽԱԹԱԲԱԼԱ“

Երգիծաբանական-սատիրական շաբաթաթերթի

4 Տարի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Նոր գրւող բաժանորդները թերթը ստանում են № 1-ից

Տարեկան գինն է Թիֆլիզում 4 ր. | Դուրսը և Արտասահման 5 ր.
Կէս տարւանը » » » » 2 ր. 50 | Կէս տարւանը » » 3 ր.

Խմբագրութիւնը բաց է՝ երբ փակ չէ, եւ գտնւում է Մօսկովսկայա փ. № 19

Մեր հասցէն՝ Тифлисъ, Редакція „Хатабала“.

Արտասահմանից՝ Tiflis (Caucase) Re'daction „Khathabala“.

Խմբ. հրատարակող՝ ԱՍՏ. ՆՐԻՑԵԱՆ

**Յունիսի 1-ից բաժանորդագրւել ցանկացողները վճարում են 3 ր. 50 կ. իսկ հաղդ 3 ր.**

---

## ՄԻՐ ՏԱՆ ԴԱՐՏԻՔԸ

Իս ժիր Դումի առչասնիրը ու տելէգրաֆնիրը վուր կարթում իմ, մէ գլուխ միր տունն իմ միտս բերում։

Միր տան սաէ-կօռէններուն էլ վուր լաւում իմ, Դումի չլէններուն իմ աչքիս առաջ կաղնացնում։

Էն օրն էլ գնացիլ էի Ցխէթ, օղորմած ըլի ձիգ էլ միգ էլ, էնդի էլ վիկալա քախկի գազէթնիրը ու էլի Դումի համբաւնիրը կարթացի։ Իժում մէ լաւ փիքր արի խառնրու մէջ պառկած։

Վա՜, դուրթ վուր ինչ նման է Դումի համբաւնիրը միր տան համբաւնիրուն, (իս վուր միր տունն իմ ասում, ձիր տունն էլ միասին իմ հաշւում, ինչի վուր մինք ու դուք էս սահաթիս հալալ ախպուր թաւուր անբաժան ինք, աչով իմն ու ձիրը չի բաժնի)։

Ինչ գաղէք աւէք, համա իս էսենց էլ գիդում էի, վուր միր Ղասուգարաւենի Դումէն, միր կինքի հայելին պիտի ըլի։

Ա՜յ, ինչ թաւուր սուրաթնիր կան միր մէջ, էնենց էլ Դումումը։

Իս, միր տանը —վունց վուր Շէւքէթ փաշէն Օսմանլի գեներալիսիմուս։

Իս ասում իմ վուր էսենց է. ու հուզուրումը էնենց էլ ըլում է։

Իս իմ ու փլաւ իմ սիրում, դուք ինձ կանաք չիլափլաւ ուտեցնի։

Կինս էլ խօ, Դումի պրէզիդենտի՝ Խոմեակովի թաւուր խասիաթ ունէ, միր տան էլած բոլուր զապրոսներուն մապրոսներուն էնենց է քաշքշիլ տալի, վունց վուր իս իմ ուզում, համա մէ մէ զամ էլ էն թաւուր զապրոս պապիրոս ին գլխիս փաթթում, վուր իսկի փիքրովս չէր անցնի։

Մինձ աղէս խիստ լաւ խասիաթ ունէ, վունց իմ խաթրին է գիփչում, վունց մօրը, իս դրա անունը Օքտաբրիստ իմ դրի. մինձ մինձ խօսիլ էլ սիրում է, համա օչովին կի բեղամաղ անելու շնուրք չունէ։ Բիջը ինչ է. բիջը, ան քածը մէ բան վուր ասին, արիդա տան, Սամփսոն Յարութինովի պէս, ջէր աստուկա կուտա, միթոմ աբիժառ է էլի (վիրաւորւել է) իժում էլի գուքայ ու իրա գուրձը կու տեհնի. չէքմի համա լաւ վաքըը կու տանի, վուր լաւ պլպլա, շալվարն էլ օրենը իրեք հարիր ջէր սրփիլ կու տայ։

Մինձ ախչիկս ջլիղան կաղեմներու խասիաթ ունէ։

Շլապէս ինչի էս թաւուր չէ ու դէյիրէս ինչի Պարիժեմէն չէ դուս դրած, կօսէ։

—Իս էլ ասում իմ՝ լաւ կուլի վուր ըլի, համա չունքի բանը էնենց է, վուր էս սահաթիս չիմ կանա առնի, էտու համա էլ, էլածն էլ լաւ է, ասում իմ։

Միր քո՜ծը, փուչ կենթանին էնենց է պրավանիր բանեցնում, կօսիս իմ բիձու աղի կնիկը ըլի։

—Իս, կօսէ, էս իմ ուզում ու էն, իս պրավա չիմ տայ կօսէ, վուր փիս գուրձլի՞ք բանեցնինք մինք, չունքի գլուխս կու ցաւէ կօսէ, սամովարը էրկու ջէր չիմ կանայ դնի կօսէ։

—Ասում իմ, վունց թէ չիս կանայ, բաս թէկի ուզում իմ, մաշ չայ չպիտիմ խմի՞, ասում իմ, ան իս խօ գորձլու մէշոկի մէջ չիմ նստած, վուր գիդենամ, թէ գուրձլին էսենց, ան էնենց է։

Իս քածի ջիգրը խիստ շատ ունիմ, իսաակ ցօցիալ դեմոկրատ չլէնններու հանդի՝ հիգս կուտում է։ Ասում իմ՝ ախպէր, քիզ ինչ իմ պարտ, վիկալ, հալա մէ բան էլ աւել, դուս գնայ սառւմիմ, իմ անեմէս։

Ի՞նչ ջուղապ է տալի։

—Իս կօսէ, վունց մէ տիղ չիմ գըտնայ, չունքի էս տունը իմն է կօսէ, իս էստի ապրիլ, աշխատիլ իմ, արին քրտինք իմ թափի, կօսէ։

—Բա ի՞ս, ասի, իս էստի լածկի ջուր իմ թափի՞, վուր էսենց զակօններով իս խօսում ասի։

Մէ մէ զամ էլ էնթաւուր բանիր է անում, կօսիս իրա խաղէյինը չիմ ու նոքար ըլիմ, ան բարեբարը։

—Միխակը էս զուզէ, կօսէ, Սաքուլը էն չի սիրում, կօսէ, Սալոմէն էնդի պտի գնայ, կօսէ, բարիշնան էլ վունչինչ չունէ, կօսէ։

Փուղ վուր ուզում իմ պարտք անի, մէշը խառնւում է, պարտատէրերուս ասում է՝ միք տայ կօսէ, չունքի ուրիշներուն էլ շատ է պարտ, կօսէ։

Խաթարայա է էլի, խաթարայա. ասում իմ,—դուն ինչ դաւի ունիս. ասում է՝ քու օքտին իմ ասում, կօսէ։

Ցօցիալ է, իսաակ ցօցիալ-դեմոկրատ։

Մէ պատիկ աղջիկ ունիմ ու նրա համա էլ, մէ ուրիշ քոծ—որանք էլ ьиьгеьги հանդի հաքիս հանում ին. միգ հուղ ու հայաթ տու կօսէ, վուր խաղանք, էս բալկօնը քիչ է կօսէ։ Մէ մէ զամ կնիկս էլ վուր որանց լաւում չի. իծանիրս մօզ իմ անում, ասում իմ՝ պա՛րուն պա՛րուն անթամնիր, միր տան Դումի և ախկին ախկին ու օրինւրթ օրինւրթ անթամուհինիր միր կուխնի ու պադւլի, թէ խիլք ունիք սուս կացէք, թէ խիլք չունիք ջահանդամը գնացէք. չունքի իմ կամքը, ջրիս հալը՝ էսենց ին հրամանք անում, ասում իմ։

Մէ էրկու ջէր վուր էսենց բանիր

չիմ տանում, էնչախնէթ ձէնները կըռ-ռում ին։

Մինչնակ աղէս խիստ անտասանձն է. ճաշին վուր գալիս է տուն, դիփ դաւի դատարա է։—Ես էս չիմ ուտում ուխս չիմ սիրում, կօսէ։

Մերն էլ խօ էնչախնէթ ծուծում է, Թումեանկովի հանգի։

Ասում իմ, վերցնիմ ջրի խելաղէն գլխին շպրտիմ, հիգն էլ, վախում իմ չունքի վօյեննի ապալժէնի ժուգն է, ով գիդի ինչ թաւուր փաթերակներ ըլի։

—Ես կօսէ արտեշօկ, բիշտէկս, բոդ-բիւ ու կատլետ իմ սիրում կօսէ։ Ես մածուն ու յօղի, արտալա ու չխրթմա, փլաւ ու տօլմա չիմ կանայ ուտի կօսէ.

—Փիէ, տօ դուն ինչ բէվօլուցիա իս գլխիս դառի, ասում իմ, վուր է-տենց բանիր իս մոգոնում, էտոր մաիկ՝ գրւանքէն մէ արտոփ միս է դառի ու տա սոգրի ու բիշտէկս է ուզում, սու-կի էլ լայիղ չի անում։

Փուչ կենթանի։

Մինչնակիցը մինձը ու մինձիցն էլ պուճուրը, Աստուծ ազատէ, խատակ տուտուց է, խատակ թեկից փախած, Գուրիշկեիչի հանգի. իս վուր ասում իմ չառ. ասում է էտենց էլ պիտի ըլի, կօսէ, իմս էլ ջիգրս է գալի, համա չունքի խուսքիս լսում է, ու գուզէ վուր ամենքն էլ իրա հանգի տուտուց-նիր ըլին, ձէն չիմ հանում։

Մէ մէ գամ ճաշի ժուգը, իրիգնահացին, չայի ու զակուսկի վախտին, էնենց մայմունութիններ է անում. կօխս՝ իմ վուրթկերանց արիւը գի-դենայ, թէ դրափ Բորբինսկու հիդ է մինձացի. շարիր, ժուլիկութիններ, պի-անիցութին, լրփութին ու մասխարու-թին, էս էլ դրա փէշակն է։

Բանի ջէր տանեմէն դուս իմ գը-ցի, մէրն էլ, հախ Աստու, խիստ է խրատում, համա գլխումը վուր չի մտնում, ինչ կօակիս։

Մէ դէյգա էլ ունիմ, նա էլ էպիս-կոպոսների թաւուր, մէ գլուխ էն է ասում, թէ վուր շափաթ գիշիր բա-նիր կօսէ, հուկուր կուլիք. կօսէ, ուր-փաթ-չորեքշափթի էլ պաս է պահում մէ գլուխ էլ ժամ է գնում, իժում միթոմ միզ համա շատ է փիքր անում՝ կուխնումը վուր մտնում է, պընձնե-րումը ինչ ըլում է՝ մինձ փայը ինքն է ուտում, վիրջն էլ, բիջ ու քոծի վրեն շարիր է մոգոնում, թէ նրանք էտենց ին ու էնենց։

Մէ պատիկ աղայ էլ ունիմ. ա՛յ ախ-մախը նա է հա՛, ինչ ասինք, ինչ խօ-սինք. դրա գլխումը բան չէ մտնում, վունց վուր Դուման Սաղաթէլովի գըլ-խումը. սա էլ տանը կօսիս քնած է. թէ մէ բան ասիս, էսօր էտենց կօսի, էգուց էնենց, փիսր չէ, համա էրկու իշի գարի չի կանա փայի անի, դօ-դիկը ինչ է, դօդիկն էլ ուրիշն է կապում։

Մէ մէ գամ էլ էնենց ին բղաւում գլխիս տանեցիքս ու մունաթնիր անում, կօսիս թանգ տարին ինձ պահած ըլին։

—Միր տունն է, միր օջախը, միր, միր, միր...

Բաս իս վունչիչ էլի, հ՞ը, վունչի՞չ։

Համա շատ ժուգ էլ, իս իսկի մարթա-ախղ էլ չիմ դնում, չունքի տեհնում իմ ինքս էլ, վուր բանի շնուքը չունին, դրանց վուր թողնիմ շիլափլաւ կու-շինին գուրձիրս, էտու համա էլ՝ ցի՛ց իմ ասում, ու զուրթ է, մէ քիչ գլխնիրը ամբարցնում ին, համա չարէն կտրած իժում էլի գլխնիրը կախ ին գցում, մկան ծակը հարիր թումնով ին փնտրում, չունքի տանից ինձ չին կանա կառավարի։

Հիմի զուրթ ասէք, ձիր անիրումն էլ էտենց չի՞ն. տեհնում իք էլի, վուր էտենց ին, էլ ինձմէն ի՞նչի՝ իք հարց-նում։

Արա հիմի վարաւուրդ արէք միր տան չլէննիրը, Ղօսուղարաւէնի Դու-մի պարտիէքի հանգի չի՞ն։

Գասպար Կալատուզեանց

---

## ԿԷՍ ԳԻՇԵՐԻՆ

Ա՜խ, եւ լալիս եմ գիշերւայ մթնում
Մենակ, յուսահատ...
Ու արցունքներս թափւում են, թափւում,
Անվերջ, անընդհատ...
Կեանքիս արեւ վաղուց է մարել,
Էլ չեմ ապրում ես...
Մի սիրտ ունէի, այն էլ դադարել,
Մարել է կարծես...
Հիւանդ եւ մենակ, եղ լաց եմ լինում
Այս մութ գիշերին,
Ու մի անկեղծ սիրտ, ընկեր եմ փնտրում
Իմ ծով դարդերին...

—

Ու կէս գիշերին, երբ վեր եմ թռչում
Արցունքն աչքերիս,
Ես ինձ գտնում եմ մայրիկիս գրկում,
Անուշ մայրիկիս...

Սիմէօն Բազէն

## ԲԱԳՒԻ ՇՐՋԱՆԻ ԽԱԹԱԲԱԼԻՍՏՆԵՐԻ ԺՈՂՈՎԸ

Բագու 18 մայիսի

Այսօր Գեօզալ-Աղարաջին Բագւի շրջա-նում գտնւող խաթաբալիստներին, որոնք կազմակերպւած են «Խաթաբալայի» ա-գրօշակի տակ, ժողովի էր հրաւիրել։ Օրա-կարգի խնդիրն էր, ինչպէս վարւել այն հազար բուբլու հետ, որը Բագւի մի խումբ կանայք տւել էին Գեօզալ Աղա-րաջուն, որպէս զի հանքային ջրեր չգնայ եւ կանանց մասին ոչ մի խօսք չգրի։

Ժողովին նախագահ ընտրւեց գանգեղու-րեցի Մօսունց-Դեւին, իսկ քարտուղար Լօր-գիւզացի Նիկալայը։

Նախագահը ժողովականներին առաջար-կեց 1000 ր. աւթիւ կարդալ կուս. պաշտօ-նական օրգան «Խաթաբալայի» այն №-ը, որի մէջ Գեօզալ Աղարաջին բաղօրա ունէր տւած եւ կոմիտէտի նախագահ Գասպար Կալատուզովը պաշտօնապէս ծանօթութիւն էր տւել։ Ոմանք կարդացւեց պ. Կալատու-զովի ծանօթութիւնը, ուր գրում է թէ... «Բագւի մարդիկ էլ մի բան չեն...» խօս-քերը։

Սկսւեց երկար ու բարակ վիճաբանու-թիւն, սակայն երեկոյեան ժամի 7-ին հե-տեւեալ որոշումը կայացաւ.—

Ա) Հազար բուբլին յետ չտալ։

Բ) Այդ գումարի կէսը ուղարկել պ. Գասպար Կալատուզովին, որպէս զի նա նկարել տայ այն կանանց եւ պարոնների պատկերները «Խաթաբալա» պաշտօնական օրգանի մէջ, որոնք հանքային ջրերում իրենց չափ ու սահմանը չեն ճանաչել։

Գ) Ամսոյս 22-ին Գէօզալ-Աղարաջին ծպտեալ կերպով ճանապարհ դնել հանքային ջրերի շրջանը եւ պատւիրել, որ աչալուրջ հսկողութիւն անէ, ինչպէս արական, նոյնպէս եւ իգական սեռի խուրարտնչիքի, ոչ օրինա-կան արարքների մասին, որոնք ապացուցած են կուսակցութեան ծրագիր- կանոնագրի յօդ. 1419 եւ 1421, 22 եւ 27 կէտերում։

Դ) Գումարի մնացեալ կէսը՝ 500 ր. թող-նել Գեօզալ-Աղարաջի տրամադրութեան տակ, ճանապարհի ծախսի համար եւ ոչ մի հաշիւ չպահանջել։

Ժողովը միաձայն ընդունեց սոյն որո-շումը, որի տակ ստորագրեցին եւ որոշեցին յայտնել «Խաթաբալա»-ին։

Նախագահ՝ Մօսունց-Դեւի.
Քարտուղար Լօրեցի Նիկալա.

Ի դիմաց ժողովականների՝
Ղարաշարւարանց Մարգարա
Գարանիխս Վարթանուշ
Բագւի Խաթաբ. Բիւրօ.

---

## ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Բագու մայիսի 22-ին երեկ. ժամ 6-ին

Խաթաբալիստ Գեօզալ Աղարաջին ա-րագընթաց գնացքով ճանապարհւեց հանքա-

ეროვნული ბიბლიოთეკა

յին ջրերը։ Մի խումբ կանայք կայարանում ցոյց սարքեցին։ Ժանդարմները մերկացրած սրերով կանանց ցրեցին։ Ցուցարարները պահանջում էին կայարանի վարչութիւնից, Գեօզալ Աղարաջիին տամասկ չը ծախել։ Ձերբակալեցին հետևեալ կանայք —Եղիսաւետա Երագիրանեանց, Անաստասիա Բեարինհալալեանց, Եկատերինա Բոշամիշեանց և Ժեննա Սիրականեանց։

Կարաւերիշի Մարգարիտ

Հանքային կայարան. 24-ին, երեկ. 7 ժ.

Դեռ ճաշի ժամի 1-ին նկատելի էր կանանց հետաքրքիր շարժումը կայարանում։ Հանքային ջրերից Պետրովսկի, Կիսլովոդսկի, Եսէնտուկի և Ժելեզնովոդսկի կայարան հասնող գնացքներից իջնում էին բաւական թւով կանայք, որոնք խմբերով ցրւում էին կայարանի զանազան մասերը։ Հէնց որ Բագւի գնացքը կանգ առաւ, երկրորդ կարգի վագոնը շրջապատեց հազարից աւելի երիտասարդ կանանցով։ Ժանդարմները շփոթւած առաջ եկան. կանայք բղաւեցին՝ «...Թոյլ չենք տալ, որ Գեօզալ-Աղարաջին հանքային ջրերը գայ. կորչի նա... գայօյ...»

Կանայք մտան գնացքը խուզարկելու, բայց պարզւեց, որ Գեօզալ-Աղարաջին միւս գնով ծպտեալ հեռացել և կառքով անցել է Պետրովսկի։

Այս քննութիւնից պարզւեց, որ Բագւից հեռագրել են այստեղ, Գեօզալին թոյլ չտալ հանքային ջրերը մտնելու։

Ձերբակալւած են մի քանի հոգի, գլխաւորապէս ազատամիտ կանանց պարգլուխները և ազահարգանի իրականացման պաշտպանները

Շնախաղօի Շուշի-Բաջի

Կիսլավօղսկի, 26-ին, ցերեկ. 10 ժամ.

Այսօր պարկի հրապարակում կանանց ժողով էր. ժողովւած են Պետրովսկի, Կիսլ., Եսէնտուկի և Ժելեզ. ամառանոց եկած թւով 14,000 կանայք առանց ամուսինների, որոնք երեկ կը գան օգոստոսի վերջերին, իրենց կանանց պարտքերը վճարելու։ Առաւօտեան ժամի 8-ից, ժողովը սկսւեց. Նախագահ ընտրւեց տիկին Բեարինհալալեանցը։ Ժողովի նպատակն էր բռնել «Խաթաբալայի» աշխատակից Գեօզալ-Աղարաջիին։ Երկար վիճաբանութիւնից յետոյ կազմւեց վարչական մարմին և խուզարկու խումբ՝ իւրաքանչիւրը երկու տասնեակ հոգուց։

Կանանց շրջանում մեծ անհանգստութիւն է տիրում. նրանք չգիտեն Գեօզալի բնակարանը։ Ընտրութիւններից յետոյ յայտարարեցին. որ ով Գեօզալ-Աղարաջիի տեղը գտնէ, նրան կը պսակեն ինժիների հետ։ Այդ յայտարարումից յետոյ, երեք խումբ կազմւեց օրիորդներից, որոնք ուխտեցին գիշեր և ցերեկ չքնել, մինչև գտնեն Գեօզալին։ Օրիորդների խուզարկու խումբը տենդային աշխատանք սկսեց։

Սիսեանցի Զարի-Բաջի

## Ն Ր Ա Ն Ք

### ԼԱԿՈՆԱԿԱՆ ՎԷՊ

### V ՀԱՏՈՐ

(Նմանութիւն)

Հատոր I

ՆԱ։ 25 տարեկան ամուրի։ Գեղեցիկ։ Ազատիկ։ Բուլւար։ Դիտակ։

ՆԷ։ 40 տարեկան։ Օրիորդ։ Մեծբերան։ Կարճլիկ։ 100 հազար փող։ Տուն։ Տեղ։ Կառք։

Հատոր II

ՆԱ։ Պարտքեր։ Անախորժութիւններ։ Պարտքատէրեր. Մուրհակներ։ Սկանդալ։

ՆԷ։ Ձանձրոյթ... Երազում է... Տխրում է... Թատրոններ... Ցուցմունքներ...

Հատոր III

ՆԱ։ Տեսաւ... Մօտեցաւ։ Ա՜յ միտք։ Ծանօթացաւ։ Հաւատացումներ... Երդումներ։ Համբոյրներ։

ՆԷ։ Տեսաւ։ Հիացած է։ Թատրոններ։ Լուսնեակ։ Սիրահարւած է։ Անմիտ։ Համաձայն է...

Հատոր IV

ՆՐԱՆՔ։ Ամուսնացան։ Բաղդաւոր են։ Երջանիկ են... Արքայութիւն... Հոգեակս։ Հրեշտակս։ Եւ ես... Դիմակահանդէս։ Խրնջոյքներ։ Առանձնասենեակներ։

Հատոր V

Անպիտան։ Սրբիկայ։ Շնայլ։ Խաբեբայ։ Մտանկութիւն։ Օ՛, ó, ó։

Կըլլան Յակոբ

---

## ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՈՒՄ

Կիրակի՝ մայիսի 24-ին առաջնորդարանում կայացաւ, Թիֆլիզի հայ հոգաբարձուների և երեցփոխների ընդհանուր ժողով, կաթողիկոսի ընտրութեան առթիւ խորհրդակցելու։

Ժողովը բացւեց ժամը 1-ից ճիշտ 1½ րոպէ անց՝ Եփրեմ վարդապետի նախագահութեամբ և առանց որևէ մէկի քարտուղարութեան։

Թէպէտ ժողովականներից ոչ ոք չէր մըտածում քարտուղարի մասին, սակայն մի անբացատրելի ներքին ձայն մեզ առում էր, կընտրւի, անպատճառ կընտրւի մի քարտուղար, բայց վերջը, ժողովի վերջը, մօտաւորապէս ցրւելուց առաջ։ Այդպէս էլ եղաւ, սակայն չշտապենք, առաջ գնանք իրերի բնական ընթացքով։

Նախագահ.—Մեծապատիւ պարոնայք, ես ձեզ հրաւիրել եմ, որ մի յանձնաժողով ընտրէք Ամենայն Հայոց Կաթողիկոսին արժանավայել ընդունելութիւն ցոյց տալու համար։

Ժողովականները ուղղւում են աթոռների վրայ, լսւում է մի երկու խուլ, զայրացած հազաց, հաւանօրէն պատրաստւում են ճառելու։ Լռութիւն։ Ահա մէկը կարծես ուզում է խօսել։

Մելիք Բախտամեան.—Արդեօք որո՞չ են յանձնաժողովի իրաւասութեան սահմանները։

Նախագահ.—Որոշելու բան չկայ. Ամենայն հայոց կաթողիկոսը գալու է, իսկ մենք պէտք է պատշաճ ընդունելութիւն ցոյց տանք։

Ժողովականները նորից ուղղւում են, երևի անյարմար են նստած, նորից լսւում է հազաց. այս անգամ ոչ թէ խուլ, այլ կոյր հազաց։

Մի Ոմն.—Իսկ նիւթականը, ես կարծ..,

Նախագահ.—Նիւթականի մասին ես կարգադրել եմ կոնսիստորիայի միջոցով, որպէսզի ծախսը մասնագրւի թեմիս եկեղեցիների վրայ։

Նախագահի այս յայտարարութիւնից յետոյ, իւրաքանչիւր ժողովական սկսում է տենչալ յանձնաժողովի անդամ ընտրւելու մասին, բայց ո՞ւմ...

Առիւծեան.—Կարծեմ 5000 ր. կառավարութիւնն է յատկացրել։

Նախագահ։ (Հաւանօրէն բարկացած.)—Մենք գործ չունենք կաթողիկոսի գրպանի հետ. մեր պարտականութիւնն է հիւրընկալ լինել, որպէսզի ամօթով չմնանք աշխարհի առաջ...

Ժողովականները նայում են պատկառանքով. կարծես ուզում են ասել՝ մեղայ Աստուծոյ։ Նրանք վրդովւած են Առիւծեանի դէմ։

Մի ոմն։ (Նախապէս կոկորդն ու քիթը մաքրելով).--Իսկ պատգամաւորութիւններ չե՞ն լինելու հասարակա..,

Նախագահ։ (Խօսքը կտրելով).—Այդ բոլորի մասին ես կը կարգադրեմ։ Մի ներկայացուցիչ լինելու է Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութիւնից, մի հատ Ներս. դպրոցից, մի հատ Ուսուցչական միութիւնից, մի հատ Ազգագրական ընկերութիւնից, մի հատ հայ խմբագրութիւններից երկու հոգի Թիֆլիզի վաճառականներից։

Գ. Լևոնեան։ (Դողդոջուն ձայնով).—Հայր սուրբ, դուք թւեցիք մի քանի ընկերութիւնների անունները միայն, ինձ համար անորոշ մնաց, թէ ինչո՞ւ գերադասութիւն է տրւել նրանց։

Նախագահ։ (Բոլորովին հանգիստ).—Ասացէք, ինչ ընկերութիւններ կան։

Ժողովականները մի սիրտ, մի հոգի դարձած սպասում են՝ թէ ահա պ. Լևոնեան կը տայ «Լոյս» ընկերութեան անունը, բայց նա կարծես զգում է այդ և յամառօրէն աշխատում է «Լոյսը» չյիշել։ Եւ յաջողւում է այդ։

Գ, Լևոնեան—Օրինակի համար՝ կայ Դրամատիկ ընկերութիւն, Գիւղատնտեսական ընկերութիւն, կայ...

ეროვნული ბიბლიოთეკა

Նախագահ. (Երևի յիշելով որ ընկերութիւններ կան).—Գ. Գարեգին, դուք պահանջում էք, որ ես ընդհանուր պատմութեան (ոչ ոք չիմացաւ թէ ինչու նախապատւութիւն տրւեց այս տարիքային) սիստեմատիկ դասընթացը սկսած աշակերտի նման, մի առ մի թւեմ եղած ընկերութիւնները: Ոչ, ես խօսում եմ ընդհանրապէս:

Մի ոմն.—Հայր սուրբը խօսում է բակկրուներով:

Գ. Լեւոնեան.—Անհրաժեշտ է մեր բոլոր ընկերութիւնները ներկայացուցիչ ունենան:

Նախագահ.—Ոչ: Օրինակի համար, ես հրաւէր չեմ կարդայ կանանց ընկերութիւններին, որովհետև ես չեմ ընդունում նոցա անկրաւութիւնը, ներողութիւն, նոցա իրաւահաւասարութիւնը:

Գ. Լեւոնեան. (յուզւած).—Նրանք էլ մարդիկ են, երևի նրանք էլ կուզենան օգնել նորընտիր կաթողիկոսին:

Նախագահ. (Արեգայական տոնով).—Այո, ոչ ոք չի արգելում նոցա: Իւրաքանչիւր մարդ, այր թէ կին, կարող է, իբրև անհատ օգնել կաթողիկոսի գալուստը, բայց դրանից չի հետևում, թէ կանայք էլ իրաւունք պիտի ունենան ներկայացուցիչ ուղարկելու: Գիտցէք, որ դա ընդդէմ է իմ սկզբունքին,—յայտարարում է նա անյողդողդ կերպով:

Բացատրութիւնը լիովին բաւարարութիւն է տալիս ժողովականներին:

Աւագեան. (Կարծես կամենում է «սկզբունքային հարց գնել).—Արդեօք ներկայ ժողովը պաշտօնական է:

Նախագահ.—Եթէ պաշտօնական չլինէր, այն ժամանակ հրաւէր կը կարդայի առհասարակ հայ հասարակութեան և ոչ թէ հոգաբարձուներին:

Աւագեան.—(Ըստ ամենայնի երևում էր որ «սկզբունքային հարց էր» ուզում գնել) Եթէ պաշտօնական է, այն ժամանակ պէտք է տեսնել, արդեօք ժողովը օրինական է:

Նախագահ.—Կաթողիկոսը մինչև յունիսի 10-ը այստեղ կլինի, այլևս ժամանակ չկայ յետաձգելու: Հաւաքւել ենք, պէտք է ընտրենք:

Աւագեան.—Հրաւիրաթերթերում չկար, թէ ինչ նպատակով ենք հրաւիրւում, պէտք էր յիշել, որ յանձնաժողովի ընտրութիւն կը կայանայ, այն ժամանակ գուցէ աւելի գային:

Նախագահ.—Հրաւէր կարդացողն այժմըս, իր խակ բերանով յայտնում է, որ յանձնաժողով պէտք է ընտրէք. զարմանում եմ, թէ ինչ կանէք գրաւոր հրաւէրը:

Ժողովականները գոհ են մնում և այս բացատրութիւնից: Իսկ Աւագեանը ձեռքով շատ շատ շփում է ծնկները (հոգեբաններն ասում են, որ դա յուզմունքի նշան է):

Բժ. Իգիթնեան.—Հետաքրքիր է իմանալ՝ հոգևորականութիւնը ներկայացուցիչ կունենայ յանձնաժողովում:

Նախագահ.—(Հմայող ժպտով.) Ի՞նչ է, կամենում էք որ չունենայ, թէ կարծում էք, որ կունենայ և պատրաստւում էք ընդդէմ խօսելու: (Ցեղձացած) Հոգևորականութեան ներկայացուցիչն ինչ կարող է անել. նա երբէք չի կարող յանձնաժողովի գործը կատարել:

Ժպտում է բժ. Իգիթնեանը, ժպտում են այլ ժողովականները: Նոյն բացատրութիւնն արդէն լի ու լի բաւարարութիւն է տալիս ժողովականներին:

Ձայներ.—Բաւական է, ընտրենք. հա ընտրենք, բաւական է:

Նախագահ.—Ասացէք ում էք կամենում:

Ձայներ.—Մելիք Բախտամեան, Բիշմիշեան, Ռ. Յովհաննիսեան, Գևօզալեան,

## ՖԵԼԻԷՏՕՆ

### ՆԱՄԱԿ ՀՈՍՀՈՍԱՊՕԼԻՑ (Ստամբօլ)

26 մայիսի

Գասպար ջան.

Ի՞նչ անտարւած ու անխիղճն ես, այ մարդ, բա ո՞նց չես հասկանում պանդուխտի հալը: Եկան և մեր կաթողիկոսական պատւիրակները. օր ու գիշեր նաւահանգստում պտտելով հոգիս դուրս եկաւ, ամեն մի նաւ երբ գալիս էր, մէջն էի ընկնում և քեզ փնտրում, կարծում էի թէ դու էլ կը գաս և այստեղ էլ մեր սուրբ կուսակցութիւնը կը կազմակերպես, կաթողիկոսի հետ էլ կը տեսնես, նրան էլ կը տրամադրես դէպի մեր կուսակցութիւնը. մեր Գասպար, ճիշտ որ ասեմ, շատ անփայթ ես վերաբերւում դու գործերին, գիտե՞ս Ախպար ինչպէս կարելի է առիթից չը օգտւել: Բօ գիտես, թէ ուրիշներն ինչպէս տարիներով և ամիսներով աշխատում էին այս առթիւ. մենք ձեռնից ենք պակաս: Գիտեմ կասես, թէ ես իմ ազնուութիւնից լայնը չեմ անի, օձի համը սողալ, ոտները լիզել. բայց որչափ դա ճիշտ է, անպայման նոյնչափ էլ կեանքը ուրիշ բաներ է հրամայում:

Լա՛ւ, չես գալիս մի գայ, գոնէ եկող եպիսկոպոս-վարդապետների ձեռքով մի քիչ զակուսկա-մակուսկա, կախէթին, գօջն ու գուրգինէլը կուղարկէիր, բա դու որ լինէիր իմ տեղը՝ ես կը թողնէ՞ի որ դու ստարութեան մէջ, պանդուխտ տեղով անթաւազաճայիր:

Ուրիշ որ չլի, բա էս չափ բան եմ գրում, սրա համա էլա, որ մի տաս շայի ծախսէիր, չէ՞ր լինի, ինչ է. ես ու իմ Աստւածը խիստ նեղացել եմ քեզանից:

Եպիսկոպոս-վարդապետներին ո՞ր տեսայ, ուրախութիւնից լաց եղայ, ախպէր մեր աշխարհիցն է. ճիշտ է, կոունկներ չէին, բայց հայրենիքի ագռաւն էլ լաւ է, երբ որ օջախդ սիրում ես, իսկ դու խօ գիտես թէ ես երբէք չեմ կարող Թիֆլիզն ու շրջակայքը մոռանալ:

Դուշէք չէք գնացել, էս տարի Մանգլիս ուփրօ շա՞տ են գնում թէ Օգնէթ ու Կօջօր. Կրծանիսումը քէփ չարե՞ք:

Պատգամաւոր հայրերը ներկայացան Վեհին, Ազգային ժողովին, եկեղեցական սրբազաններին, մեծ եպարքոսին, մեր դեսպանին ու սուլթան Մուհամէդին, որոնք ամենի վրայ էլ լաւ տպաւորութիւն թողին. մանաւանդ Մէջարովի ալլօմով ու թանկագին խուրջիրը, Սաթունեանի վեց տարեկան գառի նման դէմքը և Աշոտի վիթխարի, սարի պէս փորը:

Սուլթանը ինտենդանտի նախարարի միջոցաւ, հարց էր տւել Աշոտին, թէ ինչից է, որ այդպէս մեծ սարի հանգի փոր ունէ:

Աշոտն էլ, պատւիրակների հետ շատ էին մտածել և Մինաս Չերազի ու դոքտոր Տաղաւարեանի միջոցաւ յայտնել էր Նորին Կայսերական Մեծութեան, որ որչափ և ցանկալի էր համարում իր փորամեծութեան մասին տեղեկութիւն տալ, բայց դա անկարելի է, որովհետև գոյութիւն ունեցող միջազգային օրէնքները, արգելում են յատուկ ամբողջութիւնների մասին, օտար պէտութեանց գաղտնիքներ յայտնել:

Փորի մեծութեան խաթեր, այստեղ Աշոտին առաջարկեցին պատրիարքութիւն, բայց վերջինս մերժեց:

Այստեղ այժմս այն կարծիքի են, թէ Ղարաբաղում, Շուշում՝ որքաղան Աշոտի փորը ուղղակի մի ամրութիւն է, պարսիկների յարձակումից պաշտպանելու համար:

—

Գասպար ջան.

Գրում ես, թէ ինչ եմ անում ես Հոսհոսապօլում. ոչինչ, համարեա սովորեցայ տեղական կեանքին, առաւօտից մինչև երեկոյ կամ զայֆախանէքում եմ անցկացնում, կամ լրագրատներում, կամ պատրիարքարանի դարպասներում, կամ գերեզմանատներում և կամ պարլամէնտում:

Բոլոր տեղերն էլ հետաքրքիր են, բայց ամենահետաքրքրականը, տեղական զայֆախանէքը ու լրագրատներն են:

Զգիտեմ ուրիշ ազգերի լրագրատները, ես մերինների մասին եմ խօսում:

Ի՞նչ է այստեղ խմբագրատունը, լրագրատունը:

Պատասխանը և բարդ է և հեշտ:

Ամեն բան:

Ովքեր են տեղական թերթերի ժուրնալիստները:

Ամենքը, սկսած օրինաւորից՝ մինչև յետին լկտին ու խուլիգանը, կաշառակեր ստրկանը: Ասենք մեկտանում էլ համարեա

Առիւծեան։

Ռ. Յովհաննիսեան.—Դժբախտաբար, չեմ կարող։

Նախագահ.—Պ. Յովհաննիսեան, ձեր հանգուցեալ հայրը միշտ առաջինն էր նման դէպքերում, դուք բարոյապէս պարտաւոր էք յանձն առնել,

Ռ. Յովհաննիսեան.—(զգացուած) Համաձայն եմ։

Նախագահ.—5 հոգու անուն էք տուել, համաձայն էք, որ սրանք լինեն։

Ձայներ.—Այո, համաձայն ենք, այո։

Նախագահ.—(Երեք հոգին վկայից, որ վերջը պիտի մարերը փոխէին). Երկրորդ անգամ դիմում եմ ձեզ, համաձայն էք։

Ձայներ.—Այո, ընդունելի է, ընդունելի է (ժպտում են, շարժւում և կամաց կամաց պատրաստւում են գրել),

Մի ոմն.—Պարոնայք, քարտուղար էլ ընտրեցէ՛ք, որ արձանագրութիւն կազմէ։

Բոլորը.—(Յանկարծակի եկած). Իսկապէս...

Մինչ այդ, տեսնում են, որ Մելիք Բախտամեանն արդէն նստած է սեղանի շուրջը և գրում է, ուրեմն քարտուղար է։

Քարտուղարը հէնց էն է, ուզում է ընտրւածներին գրել—

Մի ոմն.—Սպասեցէք, պարոնայք, սա ինչ ընտրութիւն է, լաւ կլինի գաղտնի քւէարկութեամբ ընտրենք յանձնաժողովի անդամներին.

Ամենքը.—(Շւարած). Իսկապէս...

Թերթիկներ են բաժանում։

Մասնաւոր խօսակցութիւններ.—Պարոնայք. նոյն մարդկանց գրեցէք, անյարմար է սեւացնել. ինարկէ, նոյն մարդկանց, ինչպէս կարելի է։

Հաշւում են. ընտրւած են նոյն անձինք։ Ծափահարութիւններ։ Ժողովականները ցրւում են։ Նորընտիր յանձնաժողովը մնում է իր անդրանիկ նիստը կայացնելու։

Խայթ.

## ՀԱՃՈՅԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Կանաչ կարմիր թղթի պուտեր
Շաղ տւած դեղ հիւսերից՝
Կաքաւում են, թռչում վեր-վեր
Ու վարդերը թուշերից,
Բայց նրժդեհ է կարօտ եարըդ,
Հառ տարկան վառ սէրից,
Ախ, կնյա, նա մի բլբուլ պիտէր՝
Թռչէր նստէր ուսերից...

Լիլիպուտի

---

նոյնն է, ծվքեր են մեր ժուռնալիստները։

Մի մի դաւաճաններ պրինցիպների, անհատներ, որ այսօր այս են և վաղը այն։

Վերցրէք մեր թերթերը և ում անունը կուզեք կարդա։ Դրանց մէջ կը գտնես մարդիկ, որ 905—906 թւերին ուրիշ էին, յետոյ ուրիշ եղան, իսկ աւելի վաղ, տիրացուներ էին։

Յիշիր, թէ ինչպէս նորդարականները, տիրացուները, սօցիալիստներ եղան. մշակականները՝ նորդարական դարձան։ Իսկ հիմա բոլորն էլ թունդ ռէակցիոնէր են դառել։

Գասպար ջան, գրիր խնդրեմ, ինչպէս է այժմ կովկասցիների գործերի դրութիւնը։

Ես զարմանում եմ, թէ ինչու մեր բիւրոկրատները գաւառացիների մէջ են ընկնում։

Իսկապէս որ բիւրոկրատները ամենքն էլ և ամեն ժամանակ իմաստուններ չեն։ Այլապէս ինչպէս կարող ենք բացատրել դրանց արարքը։

„Մեծադիկի է, որ բիւրոկրատներից շատերը մեզ յեղափոխականներ են կարծում։

Ինչ կասես, ճիշտ չեմ ասում։

Մենք նոյնչափ յեղափոխականներ ենք, ընդհանրապէս որպէս ազգ և մասնաւորապէս որպէս մարդիկ, որչափ և Վիտտէն Դուրնովօն, Կաուլբարսը, Գոլիցինը, որոնց հետ խօ դու ծանօթ ես։ *)

Միով բանիւ, ես այդ աւթիւ յատկապէս պէտք է տեսնեմ մեր դեսպանի հետ, հաւանական է մի բան խօսեմ. ձերբակալւածների դրութիւնը կը բարւոքեմ, ինչս լաւ մօտ եմ Ջինովեւի հետ, երկու անգամ անցել եմ մեր դեսպանատան փողոցով, խօսել եմ նոյնիսկ շվէյցարի հետ. նա պատմում է, որ մեր դեսպանը լաւ անձն է, այնտեղ եղած պաշտօնն էլ նոյն կարծիքը յայտնեց։ Ցաւս ունեմ, որ իմ միջնորդութիւնը ձեռնտւութիւն չի անցնի։ Հարկաւոր դէպքում կը դիմեմ և Պետերբուրգ, որտեղ էլ ծանօթներ շատ ունեմ. այս ձմեռ, երբ իմացայ որ Ալէքսանդր Մանթաշեանը Պետերբուրգ է, Թիֆլիզից գնացի Պետերբուրգ տեսնելու, իրան չտեսայ, բայց Պետերբուրգում մեծ ծանօթութիւններ և կապեր հաստատեցի։ Յայտնի երգիչ Մակար Վարդիկեանի միջոցաւ շատ բան կարելի է անել։ Նա այժմս Պետերբուրգում լաւ պաշտօն ու դիրք ունէ, համ մեր եկեղեցում տիրացութիւն է անում, համ էլ ազատ ժամերին մասաժով է պարապում։ Բացի դրանից, Պետերբուրգ ուրիշ ծանօթներ էլ ունեմ։

Այն կահաւորւած սենեակների տիրոջ հետ, որտեղ ես էի իջեւանել, այլև ծառաների ու շվէյցարների հետ լաւ բարեկամ ենք։

Անպատճառ կաշխատեմ դրանց դրութիւնը բարելաւել։ Թող անհոգ լինեն։

Արշ. Յարութիւնեան (կեղծ)

Տպելու համար արտագրեց՝

Փօլէտիկոս

---

*) Վնաս չէ, վաւր զուրբ շասիմ ու սոտ ըլի. ամեն օր անունները յոխ եմ, հիգնիրն էլ քէփ եմ տրի. ես մեր տանն եմ հաց կերի. դրանք էլ իրենց տներումը. Էրտաքումս էլ չիմ տեհի. համա փաթերակնիրը տեհնելով, տեհիլ իմ, վաւր մինձ մինձ եղափոխականնիր ին, վունց վաւր ես Դուն ինձ վունց իս հանչնում, Երշակ, վուրթի, ես պահա ցօցիալ իմ, արա ինձ էլ փող տւէք. ես կի չիմ քէփ քաշի. համա չանքի չունիմ, էտու համա էլ ձէնս կտրիլ իմ։

Գասպար Կալատուզեանց։

## ԳԱՍՊԱՐ ԱՂԱ ԿԱԼԱՏՈՒԶԵԱՆԻ ՄՕՏ

Օ՛, բարով ձեզ, սիրելի բարեկամ, վո՞նց իս, ինչ թազա խաբար ձեր Էրեւնումէն—Այսպէս դիմաւորեց ինձ խմբագրատանը պ. Գասպար Կալատուզեանը։

—Համարեա ոչինչ, Գասպար աղա, այժմ բոլորովին հանդարտութիւն և մեռելութիւն է տիրում մեր քաղաքում։ Առանձին դէպքեր տեղի չեն ունենում։ Միակ բաները, որ կեանք էին տալիս Երեւանին՝ համարեա վերջացել են...

—Ով գիդի թիատրներու, դասախօսութիններու ու չկօլէքի հանդիսնիրու համա իք ասում։

Օ, ո՛չ, Գասպար աղա, դրանցից մի՛շտ է ազատ մեր քաղաքը։

—Մաշ ո՞վ գիդի ուզումիս ասի, վուր խիստ ջալդ. էլի ջուրը նընդան ձիր քախկի ջրի, լուսաւորութենի, բուչէքի ու մէկել հարցիրը, վուր քիչ աղաք գալմագալ, մէ մինձ գալի-գաստարա էին սարքի „Эрив.-Обяв.“ գազէթի պատիկ էրեսներում շնուրհի՝ անխոնջ ու անձնազոհ էմին Տէր Գրիգորովի ձեռօք։

—Ոչ, դրանք ես ուրիշ կերպ լինել չէին կարող և դա մեզ ամենեւին չզարմացրեց, քանի որ հէնց սկզբից այդ հարցերի մասին խօսողներն էլ, գրողներն էլ, պահանջողներն ու վիճաբանողներն էլ՝ նախապէս համոզւած էին, որ այդ բոլոր երեւակայական օդէ պալատները կը ցնդեն օդում և երեւանցին կը մնայ դարձեալ իր խարխուլ խրճիթում, կոտրած տաշտի առաջ։

—Ախար չէ՞ վուր ինժ. Միրզոեւը կցել է ջրի տրուբէք թաղիլը, ու ինժ. Կիրակոսովն էլ, մէ գլուխ իրա ասվեշչենիէքի կատարելագործեն է խօսում, մաշ դուք վունչինչ չիք ազատում նրանցիմէն։

—Ոչինչ, բոլորովին ոչինչ, քանի որ մինչև Միրզոեւի խողովակներով ջուր կը գայ, ծառս երեւանցու աչքերը դուրս կը գայ. իսկ Կիրակոսեանի ելէքտրականութիւնը նոյնչափ կը լուսաւորի Երեւանին, որչափ Շւարցի գիմնազիական նոր ծրագիրը Ռուսաստանին...

—Մաշ էլ ինչն էր էնենց կինք տալի ձիր Էրեւնին, վուր դժբախտութին է էկի ու էտենց ջալդով գրգւիլ իք նրանէն,

—Թաղականութիւնները, բանտարկութիւնները...

—Ախ հա՛,—ժպտալով ընդհատեց ինձ Գասպար աղէն,—Դուք Էրէվանցիքդ վունց վուր էրեւում է, ջիլս թարսն ու զոռբա եղափոխականնիր էք էլի, կցած գիմնազիստնեքէն ու աշակերտներէմէն մինչկլի չարշին ու գալաքը։ Վունց վուր էրեւում է օրինակների ու բռնւածների դաւթարից, դուք կարուգացիլ իք դաշնակցական մըկըրտի 40 տարւայ թարթուբագան ամենալաւ դունդուլչըն էլ, ես ու իմ հօրին. ձեզ էտու խաթրու հարգաւոր է մէ լաւ փէշքէշ, մինձ մենդալ։

—Այդ պարգեւ մենք արդէն ստացանք։

—Վ՜ա՜նց։

—Երեւանում բացեց մի նոր, կատարելագործուած բանտ.

—Վ՜ա՜նց թէ բանտ։

—Որովհետեւ հին բանտերում էլ տեղ չըկայ բռնելիք հայերին տեղաւորելու։

Երեւանցիք ի հարկէ դարուլ չկացան դըրան և նահանգական ժողով գումարեցին, որտեղ վճռեցին պատգամաւոր ուղարկել Թիֆլիզ, այդ հալածանքը վերացնելու համար։ Սիրալիր կերպով այդ բանը յանձն առաւ պ. քաղաքագլուխը, իսկ երբ հարց եղաւ նրա ճանապարհի ծախսը հոգալու մասին, բոլոր ժողովականները հարուստներն ու աղքատները, բարձր ու ցածր գոռացողները, միանգամից ծակերը մտան և էլ չերեւացին, բայց այնու ամենայնիւ պ. քաղաքագլուխը կատարեց իր պարտքը և գնաց Թիֆլիզ։

Այդ րոպէին խմբագրատուն մտան մի քանի մարդիկ և մեր խօսակցութիւնը ընդհատուեց։

Դ. Ն. Լ.

## ՆԱՄԱԿ ՉԱՐՋՈՒՅԻՑ

Մայիսի 24-ին

Հիմայ դուք զբաղուած էք նորընտիր Կաթողիկոսի ընդունելութիւնով։ Մենք Անդրկասպեան երկրում ընկած հայերս, զրկուած ենք այդ այցելութիւնից, մինչև անգամ պ. Քալանթարը, «կաթողիկոսի մարշրուտ» առաջնորդողում (Մշակ № 100) ոչ մի խօսք չէ գրել մեր մասին։

Ներում ենք պ. Քալանթարին այդ անփութութիւնը, որովհետեւ մենք էլ այժմ մեծ ուրախութեան մէջ ենք, մեր առաջնորդի այցելութեամբ։

Ինչպէս առաջին նամակումս էլ գրել էի, *) մեր թեմի առաջնորդ Մխիթար վարդապետը դուրս է եկել իր «հօտին» մխիթարելու։ Այդ առթիւ ժողով ունեցանք դպրոցում, թէ ինչպէս ընդունենք առաջնորդին, ինչ հարկաւորութիւններ ունենք նրան յայտնելու և ինչ ծախսեր պիտի անենք։

Ժողովականները բացէիբաց մերժեցին լինելիք ծախսերին խառնուել, առարկելով թէ «ինչո՞ւ պիտի մենք ծախս անենք, երբ բոլորս առաջնորդի հետ սեղանակից լինելու չենք. ով որ նրա հետ պիտի սեղան նստի, հաց ուտէ, թող նա էլ ծախքն անէ»։

Ժողով հրաւիրողներն ստիպուած եղան ծախքն իրանց վրայ առնել. ջոկեցին 12 հոգի և սկսեցին պատրաստութիւններ տեսնել։ Առաջ սարքեցին սենեակը և կամաց կամաց սկսեցին գնել ուտեստներ։ Ընտրուածներից մէկը, Թիֆլիզեցի, այնքան էր ուրախացել, որ եթէ ձկան համար մինչև Թիւա ուղարկէինք, վազէվազ կերթար, որովհետեւ առաջին անգամն էր, որ մարդամէջ էր ընկնում։

Մայիսի 8-ին Մերվից հեռագիր եկաւ, թէ վաղը վարդապետն այդ տեղ կլինի, ընդառաջ եկէք։ Թռանեցին, իրար անցան։ Մէկ էլ յանկարծ մի ուրիշ հեռագիր եկաւ, թէ վաղը չէ միւս օրը կգայ, որովհետեւ մի քանի Թմփլիկ տապակած ճուտեր Թռացել են, և գործերն էլ դեռ Թերատ են։

Այժմ վարդապետին ընդունող մարդիկ, խելք խելքի ուտին, խորհուրդ արին, թէ էս վարդապետը որ գալիս է, սրա հետ ով պիտի մեզանից խօսէ, մենք շնորհք չունենք. ինչ անենք, ինչ չանենք, բերէք տէրտէրին ուղարկենք մի քանի քաղաքատարի կանանց կանչենք, գուցէ մեր երեսը պարզ անեն, նրանք խօսեն վարդապետի հետ։

Թեգա՛ տէրտէրը հետը վերցնում է մի հոգաբարձու և գիշերուայ ժամը 10-ին-11-ին ընկնում է քաղաքի էս ծերից էն ծերը, դռները Թակում, տիկիններին ասում. «էլ հնար չկայ, ջոկուած մարդիկը խնդրել են, որ վաղը գաք, վարդապետի հետ խօսէք»։ Տիկինները տէրտէրին պատասխանում են։

—Էն որ շաբաթ երեկոյից գնում են կլուբ, կամ զաստոռինիցայ, երկուշաբթի առաւօտ տուն գալիս, կարտ խաղում, լոտոտում, յետոյ էլ Թաքուն տնից վիզիտնի բիլէթները տանում ծախում, կարտի մէջ տարուածները վճարում, ինչի՞ էն ժամանակ մեզ չեն մտաբերում, հիմայ որ նեղն են ընկել, մեզ են առաջարկում։

Կամ թէ, ա տէր, դու չգիտե՞ս, որ մենք այս չորս պատից դուրս ո՞ւր ենք գնում, որ կարողանանք այդպիսի մեծ առաջնորդի հետ խօսել։ Մեր ամուսինները մեզանից ազէտներ, մենք իրանցից բեթար։

Տէրտէրն ու հոգաբարձուն բոռ փոշման յետ են դառնում։

Կիրակի առաւօտ մարդիկ կամաց կամաց հաւաքուեցին կայարան։ 12 հոգի ջոկուածները, ձեռք քաշողները, Նաղիրի ժամանակից Թռցած, ճմռթուած սերթուկներ հագած՝ իրանք իրանց կոկել էին։

Սրանցից մէկը շամախեցի էր, ասում է «ես այդ տեսակ շորեր չեմ հագնիլ, ես շամախեցի եմ։»

Մէկ էլ տեսնենք մէկը մի լաւ սերտուկ հագած, կրծքին էլ մի նշան՝ լոյս ընկաւ կայարանում։ Բոլորը Թռցին նայելիս, թէ սա ով էր, մեծաւո՞ր է, ինչ է։ Մօտեցաւ, տեսնենք մեր գանձապահն է։

Մարդիկ սկսեցին փսփսալ, թէ սրան այս նշանն ով է տուել. մէկն ասեց Թուական է, միւսը թէ ինը վերստի վրայ կարողացել է կարդալ՝ գրա նշանն է, մէկը թէ վարդապետն է ուղարկել լաւ ծառայութեան համար, մէկ ուրիշն էլ ասեց, որ իր երեխաների համար շոկոլաթ է առել, միջից դուրս է եկել։

Ինչ որ է, գնացքն եկաւ, սև սերթուկաւորները, որ ամենից առաջ էին կանգնել, ներս մտան վագոնը վարդապետին տեսնելու։

Վագոնի դուռն այնքան փոքր էր, որ ուզում էին իրար գլուխ կոխ տան, թէ ինչ է մէկը միւսից առաջ կարողանայ տեսնել։

Բոլորին տեսնելուց յետոյ, վարդապետը դուրս եկաւ։ Մի լաւ չէնք շնորհքով, պարթև հասակով տղամար էր։ Պատրաստուած փայտոնի մէջ նստեցրին տէրտէրի հետ, նրանց յետեւից գանձապահն ու հոգաբարձուները, յետոյ սև սերթուկաւորները, ամենից վերջն էլ Թռացածները փայտոններով բերին ժամ։

Դարպասից մինչև եկեղեցին խալիչայ էր փռած, եկեղեցին էլ սրբած, մաքրած էր։

Ներս մտանք ժամը, վարդապետը դարձաւ և ասեց.

—Սիրելի ժողովուրդ, շատ շնորհակալ եմ, որ եկել էք ընդառաջ։ Տեսնում եմ, որ մարմնով առողջ էք, բայց չգիտեմ հոգով էլ առո՞ղջ էք, թէ ոչ։ Այս երկօրս կտեսնեմ ձեր հոգու առողջութիւնը, ձեր բարի գործերից։ Այժմ ես մի քիչ նեղացած եմ ճանապարհից, գնամ հանգստանամ, ճաշին տէրտէրը ժամ կասի, կը գամ կը խօսեմ։

Ու գնաց իր համար պատրաստած տունը հանգստանալու։

Ինչպէս իմացանք ճաշեց կուշտ, յետոյ քնեց և երբ արթնացաւ՝ ուղղակի գնաց վագզալ, ուրիշ տեղերի հայերին էլ մխիթարելու։

Կայծակ

Օր. Կմադրեանին

Եթէ գնենք քեզ նժարում՝
Հազիւ կը գաս երկու պուդ.
Այդ բոլորը խօ մարմին չէ,
Շատ բան էլ կայ անօգուտ։
Քեզ տաս մասի թէ բաժանենք՝
Հինգը անշուշտ—հագուստ է,
Երեք մասը—ոսկր ու կաշի,
Մէկը—վարդ, զարդ ու բուստ է.
Մընացածը—մազ, միս, արիւն
Եւ ուղեղ է (եթէ կայ).
Էլ ո՞վ չուզիլ տուն տանիլ, կո՛յս,
Քեզ նման մի անթիկայ...

Լիլիպուտի

## ՄԵԾ. ԽԱԹԱԲԱԼԻՍՏ ԳԱՍՊԱՐ ԱՂԱ ԿԱԼԱՏՈՒՋՈՎ!

Թիֆլիզ 27 մայիսի։

Մի խումբ խաթաբալիստներ ժողովւելով՝ կարդացինք մեր կենտրոնական օրգան «Խաթաբալա»—ի մէջ, ճնորհիկ Արեղայի մի գրածը, բայց ոչինչ չհասկացանք։

Կարդացինք և երկրորդը, նոյնպէս ոչինչ չկարողացանք հասկանալ։

Վերջը երկար և բարակ մտալահաթից յետոյ, եկանք այն եզրակացութեան, որ գրուած է մլթոնի լեզուով և մեր ուսատարա-

*) Այդ նամակը չենք տպել։ Խմբ.

չին, երեխանց տալով մլթոններէն՝ գրուածքին, ուզում է մեզ ծանօթացնել այդ լեզուի հետ։

Բայց կարդալով Գ. Կալատուզովի—պատասխան—ծանօթութիւնը ճնորիկի վերջին գրուածքի տակ՝ ուղղած ճնորիկին, իմացանք որ գրողը վարդապետ է, իսկ գրուածքն էլ, ոչ թէ մլթոններէն է, ինչպէս մենք էինք կարծում, այլ վարդապետերէն է։

Այդ տեղ, արդէն չկարողանալով զսպել մեր վերին աստիճանի բորբոքուած տրամադրութիւնը վարդապետերէնի դէմ, կազմեցինք սոյն բողոքագիրը, մտածելով որ եթէ թողնենք անհետեւանք, ինչպէս այդ այժմ մօդա է մեզ մօտ Ռուսաստանում, մենք էլ կ'վարւենք ճիշտ այնպէս, ինչպէս վարուեցին Սելանիկի զօրքերը Աբդուլ Համիդի հետ։ Ինչու։

—Նրա համար, որ մեր պապերն ու տատերն էլ, շատ գլուխ տաքացրին վարդապետերէն գրուած Աւետարան, Սաղմոս, Աստուածաշունչ ու կրօնական գրքեր կարդալով։ Բայց վերջը ինչ հասկացան, ու մեզ համար ինչ լաւ ձգեցին։ Զօռ ու ցաւ, այ թէ ինչ։

Մեր խեղճ պապերը, որ միշտ Աւետարան էին կարդում, Աւետարան, որի մէջ գրած է Քրիստոսի քարոզները, չունէին վարդապետերէն է գրած, չէին հասկացել, ու դրա պատճառով էլ Քրիստոսի տուած, եղբայրութեան, հաւասարութեան ու արդարութեան տեղ, մեզ ժառանգութիւն են թողել—միմեանց միս կրծել, միմեանց աչք հանել ու տուն քանդել, միմեանց ունեցածը ուտելի վերջ, կամ էկսպրոպրիացիա անել։

Էլ չեմ ասում պատերազմական դրութիւնների, բացառիկ օրէնքների, կախաղանների, բանտերի ու քաղցածութիւնից—գիլոտացող և վեց-վեց անող անթիւ փորերի մասին։

Հենց դրա համար էլ մենք չենք ուզում, որ մեր օրգանում վարթապետերէն գրեի։

Ի դիմաց բողոքող խաթարալեաների

*Երկու Շ.*

---

Գ Ա Ն Ձ Ա Կ Ի Ց

Քաղաքիցս ազգասիրութիւնը հետզհետէ գնալով վերջանում է, շնորհիւ մեր սանիտարական բժիշկների, որոնք ազգասէրներին չեն բժշկում, պատճառաբանելով, թէ իրենք ծառայելով «գիտութեան» պարտաւոր են կռուել բոլոր վարակիչ հիւանդութիւնների դէմ։ «Ազգասիրութիւնն էլ վարակիչների շարքը դասելով՝ չեն բժշկում, որ շատ ազգասէր հիւանդները ջհանդամը գնան, ուրիշներին ազգասիրութիւնով չվարակելու համար։

*Սարի*

---

ԶԵ՛Մ ՍԻՐՈՒՄ ՆՐԱՆ

Զեմ սիրում նրան. բայց երբ հեռուից
Երեւում է նա յանկարծ իմ աչքին,
Զը գիտեմ, ինչու միշտ փոթորկալից
Յուզմունքներով է լցւում իմ հոգին։

Զեմ սիրում նրան. սակայն օրնիբուն
Ես մտածում եմ միշտ նրա մասին.
Ա՜խ, խորտակել է իմ անդորրութիւն,
Դադար չէ տալիս նա իմ մտքերին։

Զեմ սիրում նրան. բայց կէս գիշերին
Ես միշտ անձկալի սպասում եմ նրան,
Եւ նա գալիս է տանջել իմ հոգին
Իբրեւ խորունկ երազ ցնորական։

Զեմ սիրում նրան. բայց չեմ մոռանում.
Փախչել եմ ուզում, բայց չեմ հեռանում.
Նրա հետ լինել ես չեմ ցանկանում,
Բայց առանց նրան ապրել չեմ ուզում։

*Լէօնիդ*

---

ՆՈՐ ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ
Յաւելուած «Կովկասեան հարցադրումի տաթիւ»։ Բարդ. եպ.
Տպ. «Շիրակ» Ալեքսանդրապոլ 1909 թ.
Գինն է 25 կոպ.

ՆԱԽԱՄԱՐԴՈՒ ԿԵԱՆՔԸ
20 պատկերով Վ. Լամկեւիչ
Գինն է 25 կոպ.

Ե. Ա. Ք. Գեղամեան
ՊԱՏՄԱԿԱՆ ՔԱՂՈՒԱԾՆԵՐ պրակ. Ա.
Գինն է 30 կոպ.

պրակ. բ. գինն է 30 կոպ.

ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԷՏԻՒԴՆԵՐ
Մ. Մանուէլեանի
Գիրք 1 գինն է 35 կոպ.

«ԲԱԶՄԱՎԷՊ» ամսագիր Վենետիկ
մայիս 1909 թ.

«ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ» ամսագիր
1909 թ. ապրիլի № 4 Վիեննա։

PARFUM CORDIALE № 4711

ԳՈԼՈՓ «ԿՈՐԴԻԱԼ»

Նորագոյն մօդայոյն գուխի, հոտի հրաշալի և ամուր լինելու պատճառով չունի իր նմանը։

ՖԵՐԴ. ՄԻՒԼՀԷՆՍ
Քէօլն Ռայնի վրայ
Նորին Կայսերական Բարձրութեան մատակարար.
Ծախւում է ամեն տեղ

**Ферд. Мюльгенсъ**
Кельнъ н|Рейнъ, отд. въ Ригѣ.

---

У. Н. Степановъ
Врачебная Тайна и указъ Арм. Синода о добрачномъ осмотрѣ
Цѣна 40 коп.

Աստղեան Мамедъ-Али-Шахъ и современная персія
130 էջ գինն է մի րուբլի

ՆՈՐ ԴՊՐՈՑ ամսագիր 2-րդ տարի
1909 թ. ապրիլ № 4

---

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

АТРПЕТЪ
**МАМЕДЪ-АЛИ ШАХЪ**
Современная Персія
Александрополь тип. Ширакъ 1909

ПРОДАЕТСЯ:
Въ Тифлисѣ книжная торговля Гуттенбергъ
Въ Александрополѣ Типографія Ширакъ

---

Միքայէլեան փող., տուն
Տէր-Յակոբեանի № 97

ՄԱՅԻՍԻ 17-ից ՄԻՆՉԵՒ ՅՈՒՆԻՍԻ 4-Ը

**ԷԺԱՆ ՎԱՃԱՌՔ**

„ՄԵՂՈՒ" ԸՆԿ.
ԱՃԽԱՏԱՆՔԻ ՏԱՆ

ԱՐՀԵՍՏԱՆՈՑՆԵՐՈՒՄ ՊԱՏՐԱՍՏՒԱԾ ԻՐԵՐԻ, ՆՈՅՆՊԷՍ ԵՒ ԿՈՂՄՆԱԿԻ ԽԵՂՃ ԿԱՆԱՆՑ ՁԵՌԱԳՈՐԾՆԵՐ։

Մանկական զգեստներ՝ չթի, բատիստի, պիկէի, քաթանի, գոգնոցներ փոքրիկների և մեծերի համար. կանանց և տղամարդկանց շքեղ և պարզ սպիտակեղէն. կանանց բլուզկաներ, Matinées (առաւօտեայ զգեստներ), ծաղիկներ և զանազան տեսակի իրեր։

Գները չափաւոր են։ Վաճառքը տեղի է ունենում ամենայն օր, նոյնիսկ նաև կիրակի օրերը՝ առաւօտեան ժամը 9-ից մինչև երեկոյեան 10-ը։ Մուտքը ձրի է։

---

Ա. ՏԷՐ-ՂԱԶԱՐԵԱՆԻ
Հանրամատչելի
**ԲԱՌԱՐԱՆ ՕՏԱՐԱԶԳԻ ԲԱՌԵՐ**
ԵՒ
Գործածութեան մէջ մտած ձեւերի ու դարձուածքների

Անհրաժեշտ ձեռնարկ լրագրներ և գրքեր կարդալիս

308 երես. հաստ գինը 1 ր., ճանապարհածախսով 1 ր. 20 կ., գումարով սովորական զեղչ։

Դիմել՝ Тифлисъ; Кавказская Книжная Торговля Захарія Грикурова. Ճանապարհածախսը գնողի վրայ է։



ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ

„ՊՐՕՎՕԴՆԻԿ"

ԱՐՏՕՆԻԱԾ

Ամենալաւը Աշխարհում



Ամենաառաջին և ամենաբարձր ամրութեան, լաւ յատկութեան, շքեղ ֆասօնների և ամենալաւ գործածւող նիւթերից։

ԱՆՊԱՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԶՈՅԳԻ ԱՆՕՐԻՆԱԿ ԱՄՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ



ԿՐԼ ԽԱԿՕՇԻԿՆԵՐ

ՊՐՕՎՕԴՆԻԿ

ԱՐՏՕՆԻԱԾ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ԱՄԲՈՂՋ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Մ Ի Ւ Ն Խ Ե Ւ Վ Է Յ Ս

ԹԻՖԼԻԶՈՒՄ ԵՒ ԲԱԳՒՈՒՄ

1888

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1909 թ. յունիսի 1-ից

„ՈՒՂԻ"

Քաղաքական, հասարակական և տնտեսական շաբաթաթերթի

Բաժանորդագինը. Բագու՝ մինչև տարւայ վերջը 2 ր., Բագւից դուրս՝ 2 ր. 50 կ., արտասահման՝ 3 ր., հատը՝ 7կոպ.։

Հասցէն՝ Баку. Типографія Н. А. Эриванцова, Редакція „УГИ". Դրամ և պատհանձնագրած նամակներ ուղղել՝ Баку, уголъ Прачешной и Молоканск ул., домъ Куеиса, зубному врачу Мартиросу Каграманянцу.

Լոյս տեսաւ և վաճառւում է

Բ Ա Խ Շ Օ Ւ

ՕՐԷ՛Ն ՉԻՐ ԿՈՒԹՆ Է

Գինն է 5 կոպ.

ՆԱԽԱԶԳՈՒ



ՇԱՑՈՒՄՆ

Ի նկատի ունենալով, որ մինչև այժմ շարունակում են կեղծել մեր էտիկէտները, որպէսզի պատեն իրենց աւելի վատ ապրանքը, գործադրելով արկղիկների և կապոցների միատեսակ ներկն ու մարկան, փոխանակ բոլորին յայտնի

ԲԱՐՁՐ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ

ՍԻՄՊԱՏԻԱ 10 ՀԱՏԸ

№ = 10 ՀԱՏԸ

5 Կ.



Ինչպէս նաև մեր ֆիրմայի ուրիշ գլանակներ։ Մեր պ. պ. գնողներին խնդրում ենք ուշադրութիւն դարձնել ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՄԱՐԿԱՅԻՆ և ազգանունին

Ն. Ի. ԲՕԶԱՐՋԵԱՆՑ ԵՒ ՈՐԴԻՔ


Խմբագիր-հրատարակող՝ ԱՍՏ. ԵՐԻՑԵԱՆ

Скоропечатная „Дзмоба" Московская ул. № 5.

# ՕՏԱՐ ԻՒՄՕՐ



Մեր շատ գործիչների գրպաններում, մեշոկներով կարելի է հասարակական ռուբլիներ գտնել. Եթէ երբեւիցէ այս ձեւով խուզարկութեան ենթարկենք սրանց գործունէութիւնն ու գրպանները։

## ՄՕԴԱ



(„Le Rire“).

Անիծած մոդա, չես իմանում, թէ սրանցից որն աւելի գեղեցիկ է։

## ԱԲԴՈՒԼ ՀԱՄԻԴԸ

Рис.дюнг.



Իսկապէս աւելի լաւ էր ինձ. Թռչնապահութեամբ պարապել, քան թէ կայսր լինել։
Գոնէ այս օրինակ ապրուստներ չէի ունի։

## ՏԱՃԿԱՍՏԱՆՈՒՄ



ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԱՍՈՅԱՆՆԵՐԸ ՆԻԱԶԻ ԵՒ ԷՆՈՒԵՐ ԲԷՅԵՐԸ ՊՕԼՍՈՒՄ

## ՇՈՒՇԻՆՑ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԸ.



*Ահա թէ ինչու կրիայի քայլերով է առաջ գնում Ղարաբաղի մայրաքաղաքի գործերը։*

## Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ



*Վիմագր. Գ. Դիւստերֆիկի*

*Բաջարի աշակերտ ուսանողները ասին, այ թէ ինչպէս են ուսուցիչները հեռանում ճեմարանից. սրանք մեր կրթւածներն են, իսկ անկիրթները ինչ կը լինեն։*